



## ՎԵՐԶԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Վանքի շրջապատը թափսի և տրամության մեջ էր Միաբանության առօրյա խոսակցությունները պատվում էին Վեհափառ Հայրապետի ծանր հիվանդության առանցքի շուրջը: Ժողովրդից հաճախակի ներկայացուցիչները էին գալիս Վեհափառի առողջության վիճակն իմանալու համար: Առավել ծանր էր մեր, սարկավագներիս վիշտը: Վեհափառին կորցնելու միտքն անդամ մեղ սարսափ էր ներշնչում: Հաշտովել, թեկուզ հնարավոր և անխուսափելի կարծված նման մի դաշն կորստի հետ, երբ անսայլաք համոզմումքն ունես, թե նրանով գուշա կը ընկնի անկյունաքարը դարերով սրբագործված մի կառուցի, մի հաստատության՝ ինքնին ողբերգություն: Է Սակայն Վեհափառին վերջին հրաժեշտը տալու հավաքնությունը շունեինք, քանզի դժվար էր հաշտովել վերոհիշյալ ողբերգական կորստի հետ, երբ դեռ Վեհափառը ապրելու և գործելու լիակատար վճռականությունն ուներ: Նախապես եղած այցելությունների առթիվ նր կողմից ցուցաբերված աննահանջ բավատեսությունը, անսպառ կորուվը, մեղ հայ ժողովրդին և Հայաստանյայց Եկեղեցուն սպասարկելու զգացմունքն ու գիտակցությունը ներշնչելու ոգևորությունը երբեք մեզ չէին տանում դեպի Վեհափառ Հայրապետի հնարավոր մոտարտա կորըտյան ենթադրությանը, չնայած որ նրա շափականց հյուծված դիմագիծը գուշակել էր տալիս, որ նա հիմնադր էր, և ծանր հիվանդ...

Գործի պարտադիր բերումով մայիսի 7-ին, առավոտյան, Գուրգեն սարկավագը եղել էր Վեհափառի մոտ: Նկատելով նրա վատառողջ և անմիտար վիճակը, հակառակ իր ինքնազուապ բնափրության, չէր կարողացել շարտասփել: Ոչ մի խոսք չէր արտասանել Վեհափառը Գուրգեն սարկավագը երեկոյան վերադարձավ էջմիածին: Արտակարգործն

դոմատ և այլալված էր նրա դեմքը: Հայոնց մեզ եղել եղելությունը: Որոշեցինք անմիջապես այցելություն տալ Վեհափառին: Ճանապարհին, մինչև Երևան, գրեմե ոչ մի զարտուրի խոսակցություն: Ցուրաքանչյուրիս գեմքին նկատվում էր ներքին ծանր ապրում: Ների դրոշմը Մեր հոգեկան աշխարհը մոռալ էր: Ինչ որ դաժան կանխազգացում ձմլում էր մեր սիրառ Համբոնթաց, բարձրանուած էինք հիմանդանոցի աստիճաններով: Ցուրաքանչյուրիս երեակարտության մեջ ուրվագծվում էին քիչ հետո մեր աշքի առաջ բացվելիք տեսարանի հնարավոր տարբերակները իրենց կակիծով, գուցե և ողբերգությամբ: Նախասրահում նստած էին հոգեշնորհ Գեորգ ծայրագույն վարդապետ Վաթյանը և բժիշկները: Բոլորին նայվածքներն էլ ինքնաբերաբար շրջում էին նրանց դեմքերին և, մեր սպասածին հակառակ նկատուած գոհունակություն և անդորր հոգեվեճակ: Հայր Գեորգը մեղմ ժակիտով դիմեց մեզ: «Եկել եք Վեհափառին տեսության...»: Եվ երբ մենք գրուներս շարժեցինք, դրական պատասխանի փոխարեն, ավելացրեց, «Շատ ապրեք, շատ լավ եք մտածելու»:

Գեորգ հայր սուրբը, Վեհափառի հավանությունը առնելուց հետո, հանդարտ քայլերով առաջնորդեց մեզ Վեհափառի սենյակը:

Ցուրաքանչյուրիս սիրտը արտակարդ հոգմոնքից կարծես ընդհատ-ընդհատ էր բարախում: Վեհափառի մոտն անցնելու նախկին համարձակությունն ու ինքնավստահությունը չունեինք: Ամեն մեկը մեզանից վարանում էր առաջինը ներս մտնել: Դժվար էր առաջինը տեսնել Վեհափառին՝ նախապես ունեցած զանազան ենթադրություններից հետո: Համեմայն դեպս հավաքեցինք մենք մեզ և խորը երկյուղածությամբ, հանդարտ քայլերով մոտեցանք Վեհափառի մահճին...:

Այդ պահը վերհիշելն անգամ առատ արցոնաք է բերում իմ աշքերից: Որքա՞ն բան էր փոխվել Վեհափառի դեմքին... ո՞ւ ու էր նրա կենսուրախությունը... ո՞ւ ու էին նրա արտակարգութեան հմայիչ քմծիծաղն ու ժամանեցը... Ո՞ւ ու էին նրա մանր աշքերի վառվուն փայլը, կրակը, իմաստությունը... Անհծված հիվանդությունը ի՞նչ դաժան դեր էր խաղացել... Որքա՞ն ծանր էին այդ հիվանդության հարվածները...

Համբուրեսով վերմակի վրա թուլ ձգված Աջը, կանգնեցինք մեկ շարքի վրա այնպես, որ առանց գլուխը շարժելու տեսներ բոլորին: Առաջին հերթին իր ցուցամատի հազվական նկատելի շարժումով սկսեց մեզ համրել:

— Երեք... հատ էլ... Մուսկվայում... — խոր շնչարով կարողացավ ընդհատ-ընդհատ խոսել և ասպա վերին շրթումքի փոքր պրկոմով գոհումակություն արտահայտելով, ափելացրեց.

— Բա... վական է...

Այս շափազանց սուս արտահայտությունն էլ բավական եղավ, որ մենք Վեհափառ Հայրապետի միտքն ու հույսերոց կարողանալինքը լրացնել ու համեստալ: Ի՞նչ վարդադուն հույսեր էր կապած մեր աճի ու նվիրվածության, մեր մտքի ու հոգեկան համեստ պրժանիքների հետ: Հայրական ինչպիսի անսպառ գործուրանքով էր շրջապատել մեզ և ինչպիսի սեր, զոհվել գիտնալու դգացմունք էր ներշնչում մեզ... «Թափական է...», — շնչաց նա: Այդ նշանակում էր, քիչ շըր թիվը, որով կարող կլինի մեր եկեղեցին շենքաւոնակուու:

Հայոց Հայրապետը իր վերջին ճիգերն է հավաքում իր սիրատուն սարկավագների հետ զրոցելու նրա գումար շրթումքները շարժվուած են: Լսելի են ինուամ բառերի պնդատ վանդեր: Քարացած՝ լսում ենք, զանալով ամեն կերպ ամեն ինչ համեստալ, ինչ որ Վեհափառի իմաստում ուղեղի մեջ կառուցվուած ու զարգանուած էր, ինչ որ նրա հոգու մեջ փոթորկուած էր...: Զապլած էր մեր շնչառությունը մեր աշքերի մեջ վառվող արցոնքների հետ...

Նստելու ազդանշան է տալիս: Համբառակ պատշաճովթյան՝ համակերպուած ենք, առիթ շտալու համար կրկին ազդանշանի, որը ուժ էր խլում հյուծած Հայրապետից: Մի քանի բոպի գաղաք: Ստեղծվեց շափազանց հուզիչ պահ, քանի որ լուսովթյունն ու տեսարանի տրտմովթյունը առավել հնարավորովթյունն են տալիս մեր սրտի ու մտքի աշխատանքներին: Քակվուած է Վեհափառի հետ կապված բավագույն հիշատակների կծիկը: Որքա՞ն առուց, կենսուրախ, փարթամիջան էր նաև Կ

այժմ որքա՞ն դժգույն ու հյուծված է: Աստված իմ, ի՞նչ շուստ է մաշվուած կյանքը...:

Վեհափառը դարձրալ փորձուած էր խոսել: բայց արդեն մեղմ ձայն կար և բառերի մեջ որոշ հստակովթյուն էր մտնուած: Բոլորս էլ հանկարծակի սթափվեցինք և սկսեցինք ավելի հակվել դեպի Վեհափառը:

— Ժողովովով ավելի շատ ձեզ է... սիրում: Դուք էլ... նրան պիտի սիրեք: Դուք երիտա...սարդ եք, դուք եր...ջանիկ եք...:

Այս արտակարգութեան հուզիչ նախագաւության ամեն մի բառի մեջ Վեհափառը այնքան խորը զգացմունք ու սեր, այնպիսի դառը ափսուանք էր դնուած, որ մեր բուրանցուրի հոգին ուժին ուժին սարսուած էր: «Այրել ժողովովթյուն», այդ արդեն միս և արյուն, էր դարձել մեր մեջ զնորդիվ Վեհափառ Հայրապետի ամենօրյա թելադրանքներին: Բայց նա երբեք մեզ չէր ասել «Եուք երիտաւարու եք, դուք երջանիկ եք...», քանի որ երիտաւարու պարտ վիճակուն հատկապի այսօր էր ապրում, հիվանդանոցի տրտում մահձի մեջ:

Մինչ այդ, վերահսկի բժշկուհիներից մեկը ներս մտավ, զարմացած, թե ինչպիս է պատահել, որ այսքան մարդ ներս են թողել և նույնիսկ պատրաստվուած էր մեզ դուրս հրավիրել, երբ Գեորգ հայր սուրբը նրան ասաց, որ մենք Վեհափառ Հայրապետի սիրատական պատահին ենք և թե Ինքը՝ Վեհափառը այսինքն մեջ ներս գալի:

— Ներողովթյուն, ներողովթյուն, եմ խրնորուած: Համենայն ժեպա առիթ մի տվիք հոսպմունքի և նոսակցության, — ասաց ու դուռս եկավ բժշկություն:

Վեհափառն սկսեց մեղմուրեն և խորիմաստ ժամանակալ:

— Նա դեռ... չի ճա... ճա... շում ձեզ:

Մի քանի վայրկյան անց, շարումակց հետևյալը:

— Ճեմա... րանող... մեծ պար... առա... կա... նություններ ոմիի...: Պիտի ավելի արդյունա... մա... մեր դառնա: Օսանողների թիվը պի... սոի բազ... մացնել: Արտա... սահ... մանից էլ 20 հոգի պիտի բերել տանք:

Առավել ինքնավստահ ու համբառակ դարձան նրա խոսքերը: Տարօրինակ է, արդեն ինչ որ կենդանություն էր նկատվուած դեմքին և երբեմն թեթևակի ժամանական:

— Կառա... վա... րությունը ու ըստ մար է բաց թողել Մայր Տաճարի վերա... նու... ըստ գուգու... թյան համար, որպես պատմական և ճար... տարա... պետական կա... ընվոր հուզից հարացան: Դա պատմական խոշոր դեպք է: Շնոր... հակալ ենք Կա... ու ավախ... ըստ թրունից:

— Ծնորչիվ Զերդ Մեծովիյան, — շտապեց Հիշեցնել մեզից մեկը հուղված ձայնով:

— Ծնոր... Հիվ Մեր ուղ... զամոռո... թյան, — լրացրեց Նա Հաղիվ լսելի ձայնով և իրեն յուրահատուկ համեստովիյամբ:

Այս մի կերպ Հաջողված նախադասությունները սկսեցին խանդավառել Վեհափառին և նա փորձեց դադար շուալ, սակայն, հակառակ իր կամքին, ստիպված եղավ նահանջել: Չնայած այդ խանդավառությունը մեզ մխիթարում էր, բայց նրան խնդրեցինք հանգստանալ: Մենք, որ ամենայն ուշադրությամբ հետևում էինք նորին Ս. Օծովիան ամեն մի շաբաթին, դիմագծերի թույլ խաղերին և Ս. Աշխ հայով Հազ նկատելի շարժումներին, այս վերջին վայրկյաններում մեր նկատած փոփոխությունը, չփառես ինչու, մեզ հույս էր ներշնչում, որ Վեհափառը դեռևս ապրելու վճռականություն և կարող դություն ուներ: Այս հավատը մեզ խորապես խանդավառեց նույնիսկ և ես ինքնարերար ասացի:

— Զեր բոլոր երազները կյանքի են կոչված: Զեր թանկագին առողջությունն է անհրաժեշտ մեր ժողովորմին, մեր եկեղեցուն և մեզ: Դժվարությունները հաղթահարելու մեծ փորձ ունեք և վստահություն ենք հայտնում, որ այս դժվարագույն պահն էլ կհաղթահարեք...

Գուցե ևս շարունակեի, եթե Վեհափառը շրնդհատեր ինձ հետեւալ շեշտված խոսքերով:

— Հենց դա էլ ինձ հար... կավոր էր... մի՞... մի՞... հուսա... լքվեք: Եղեք լա... վատես: Եզմիա... ծինը տառապա... լից ու փշոտ ճանապարհ է անցել, բայց կեն... քանի է մնացել ու կմնա: ... Սիրե... շեք էջմիածինը: մե՞ղք է էջ... միածինը:

Այս սրտառուշ քաջալերություն ու պատգամը, որ գալիս էր հաղիվ լսելի շաբաթին մահմար մահմար համբած հայոց Մեծ Հայրապետից, նոր ուժ ու անձնվերության շրնկը կող հաստատակամություն էր ներշնչում մեզ:

Կրկին անդամ Վեհափառին խնդրեցինք հանգստանալ, սակայն մերժեց:

— Ար... տասահ... մանյան իմ պան.... դուստ որդիներս հո... գեալես կմիսի... թար....

վեն... լսելով այս վե... րա... նորովու... թյան մասին: Ճավ է ինձ համար, որ իրենց իսկ աշ... քերով չեն... տեսնում: Ծնոր... հակաւ կլի... նեն ամբողջ հոգով մեր Հայրենի կառա... վարությանից: Կլինեն զար... մա... ցող... ներ ևս, բայց նոքա իրենք իրենց կպա... տաս... վասնեն... :

Յանկացանք տեղիվուն վրա զրի առնել Վեհափառի խոսքերը, քանի որ նա սկսեց համեմատաբար ավելի հեշտությամբ և հասկանալի մրմունչով արտահայտվել, սակայն անպատճեն նկատեցինք, գտնելով, որ լավ չէր անդրադառնա Վեհափառի տրամադրության վրա:

Հակառակ Վեհափառի բուռն ցանկության ու ծիփերին, հակառակ նրա ինքնավաստահության, նա զգացնել տվեց, որ շատ է հոգնում և գգում է հանգստանալու պարտադիր անհրաժեշտություն:

Մենք ուստի կանգնեցինք: Մի քանի վայրկյան լուս ու անթարթ հայացքով նայեց մեզ վրա: Որքա՞ն սեր և գուգուգանք կար, որքա՞ն իմաստ ու թելադրություն կար այդ նայածքի մեջ: Աստված՝ իմ, ինչպիսի հուզիչ հրաժեշտ էր... Վեհափառը երբեք այլքան դժբախտ չէր եղել:

— Տեր ընդ... ձեզ: Եր... քեմն ինձ հի... շեցեք..., կիսախոսի աշքերը գիշ բանալով շշնչաց նա:

Մեր վերջին ճիգերն էինք հավաքում՝ ըստ պերու համար մեր արտասուբը: Զենք փորձում հեռանալ, մի վայրկյան ավելի վայելու համար Վեհափառի թանկագին ներկայությունն ու հայրացքը: Բոլորս զբում էինք, որ ինչ որ բան էր փուզ գալիս մեր վաստող սրտերի մեջ: Մենք ապրում էինք լավագույն ու մեծագույն հարազատին կորցնելու թեկուզ ենթադրության դառն ողբերգություն: Պատկերացնո՞ւմ եք մեր ցավը, մեր անհուն կալիջը... :

Լուս երկյուղածությամբ համբուռում ենք Վեհափառի: Հյուծված Աշը և համբընթաց, առավել երկյուղածորեն հետ-հետ գնում դեպի:

Ծիկացած պողպատով գրվեց մեր սրտերում Հայոց մեծագործ Հայրապետի վերջին խոսքը.

— Եր... բեմն ինձ հի... շեցեք... :

